ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2008

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2008թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Գ. Վարդապետյանը և Ս. Իսրայելյանը:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2008թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 554.4 մլրդ դրամ կամ 1,831.7 մլն ԱՄՆ դոլար:

	31.12.03		30.06.04		31.12.04		30.06.2005		31.12.2005		30.06.2006		31.12.2006		30.06.2007		31.12.2007		30.06.2008	
	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար
Պետական պարտք	664.4	1,173.9	617.2	1,154.7	621.1	1,278.4	552.9	1,250.0	546.1	1,213.2	542.4	1,295.2	508.9	1,400.1	490.5	1,438.5	516.2	1,696.9	554.4	1,831.7
այդ թվում՝																				
արտաքին պարտք	621.3	1,097.7	572.2	1,070.5	574.7	1,182.9	493.0	1,114.5	494.8	1,099.2	487.2	1,163.4	438.2	1,205.6	431.6	1,265.8	440.8	1,448.9	469.2	1,550.3
ներքին պարտք*	43.1	76.2	45.0	84.2	46.4	95.5	59.9	135.5	51.3	114.0	55.2	131.8	70.7	194.5	58.9	172.7	75.4	247.9	85.2	281.4
որից																				
պետական արժեթղթեր	43.1	76.2	45.0	84.2	46.4	95.5	59.9	135.5	51.3	114.0	55.2	131.8	70.7	194.5	58.9	172.7	66.3	217.9	76.1	251.4

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից.

30.12.03 – USD 1 = AMD 566.00
30.06.04 – USD 1 = AMD 534.49
30.12.04 – USD 1 = AMD 485.84
30.06.05 – USD 1 = AMD 442.34
30.12.05 – USD 1 = AMD 450.19
30.06.06 – USD 1 = AMD 418.79
30.12.06 – USD 1 = AMD 363.50
29.06.07 – USD 1 = AMD 340.95
30.12.07 – USD 1 = AMD 304.22
28.06.08 – USD 1 = AMD 302.65

* 2006թ. ներքին պետական պարտքի մեջ ներառված է ՀՀ ԿԲ վերակապիտալացման նպատակով տրամադրված պետական պարտատոմսերը՝ 12.7 մլրդ դրամ

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք

ՊՊ- պետական պարտատոմսեր

ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր

ՄԺՊ-միջին ժամկետայնության պատատոմսեր

ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ԽԱՊ-խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր

ԳՊ-Գանձապետական պահառու

2008 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 76,078.12 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ 5,627.00 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր՝ 44,769.14 մլն. դրամ, երկարաժամկետ պարտատոմսեր՝ 25,439.19 մլն. դրամ և խնայողական պարտատոմսեր՝ 251.79 մլն. դրամ
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 10,109.0 մլն. դրամ,
- ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7. 8783 %,
- ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 2005 օր (ՊԿՊ-եր՝ 114 օր, ՄԺՊ-եր՝ 894 օր, ԵՊ-եր՝ 4396օր և ԽԱՊ-եր՝ 229 օր):

Աղյուսակ 1

2008 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

(մլն դրամ)

	30.06.2007թ.	31.12.2007թ.	30.06.2008թ.
Ներքին պետական պարտքը (մլն. դրամ), որից՝	**58,876.04**	**75,429.8**	**85,204.7**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	3,794.02	7,000.0	5,627.00
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն. դրամ)	41,113.53	47,421.15	44,769.14
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	13,794.05	11,710.62	25,439.19
խնայողական պարտատոմսեր (մլն. դրամ)	174.43	171.43	251.79
ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ (մլն.դրամ)*	**-**	**9,126.6**	**9,079.5**
ՆՊՊ-ի ժամկետայնություն (օր), որից՝	**1468**	**1258**	**2005**
կարճաժամկետ պարտատոմսեր (օր)	183	158	114
միջին ժամկետ. պարտատոմսեր (օր)	835	878	894
երկարաժամկետ պարտատոմսեր (օր)	3725	3467	4396
խնայողական պարտատոմսեր (օր)	124	231	229

* վարկը ստացվել է ԱՄՆ դոլարով՝ 30.0 մլն դոլար ծավալով:

ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%) **որից՝**	**7.2870**	**7.0480**	**7.8783**
կարճաժամկետ պարտատոմսեր (%)	5.7213	6.0191	6.3353
միջին ժամկետ. պարտատոմսեր (%)	7.0214	6.8795	7.0701
երկարաժամկետ պարտատոմսեր (%)	8.5161	8.3414	9.6415
խնայողական պարտատոմսեր (%)	6.7202	7.4374	7.9834

Գծապատկեր 1

2008 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2008 թվականին առաջին անգամ թողարկվել են պետական ուղենշային պարտատոմսեր 3, 5, 10 և 20 տարի մարման ժամկետով, համապատասխանաբար 20 մլրդ. դրամ, 30 մլրդ. դրամ, 50 մլրդ. դրամ և 80 մլրդ. դրամ ծավալներով: Պետական ուղենշային պարտատոմսերը կիսամյակային պարբերականությամբ արժեկտրոնային եկամուտ բերող, մեծածավալ թողարկմամբ պարտատոմսեր են, որոնք շուկայում շրջանառող մյուս արժեթղթերի համեմատ առավել իրացվելի են և որոնց եկամտաբերության հիման վրա է կառուցվում պարտատոմսերի եկամտաբերության կորը: Այս պարտատոմսերը տեղաբաշխվելու են առաջիկա մի քանի տարվա ընթացքում՝ թողարկումների պարբերաբար վերաբացումներ կատարելու ձևով: 2008թվականի փետրվար ամսին թողարկվելով առաջին կիսամյակի ընթացքում տեղի են ունեցել ուղենշային պարտատոմսերի 15 տեղաբաշխման աճուրդներ, որից 7-ը՝ ՄԺՊ-ի, 8-ը՝ ԵՊ-ի: Տեղաբաշխման ենթակա ծավալը կազմել է 37.0 մլրդ. դրամ, որից տեղաբաշխվել են 25.03 մլրդ. դրամ ծավալով պարտատոմսեր: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ՊԿՊ-երի 5 թողարկում՝ 5.0 մլրդ. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 1.6 մլրդ. դրամը և ԽԱՊ-երի 9 թողարկում՝ 450.0 մլն. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 143.5 մլն. դրամը: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալում ՊԿՊ-ը կազմել են 1.6 մլրդ. դրամ (6.0%), ԽԱՊ-ը՝0.14մլրդ. դրամ (0.5%), ՄԺՊ-ը՝ 8.1 մլրդ. դրամ (30.3%), ԵՊ-ը՝ 16.9 մլրդ. դրամ (63.2%): ՊԿՊ-ի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 1.0 մլրդ. դրամ, ԽԱՊ-ինը՝ 50.0 մլն. դրամ, իսկ ՄԺՊ-ի մեկանգամյա տեղաբաշխման ենթակա միջին ծավալը կազմել է 2.1 մլրդ. դրամ, ԵՊ-ինը՝ 2.8 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 0.78 անգամ և կազմել 32.59 մլրդ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել

է 3841 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.45% (տե՛ս աղ. 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 20 տարի, նվազագույնը՝ 52 շաբաթ:

Աղյուսակ 2

2008 թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	6.4550	7.0000	6.8238	364
Փետրվար	6.9300	11.0000	9.7120	4430
Մարտ	8.4646	11.0000	10.0047	4564
Ապրիլ	7.0000	10.0000	9.7205	3255
Մայիս	6.9900	7.5000	7.4374	925
Հունիս	6.9500	11.0000	8.9549	3306
I կիսամյակ	**6.4550**	**11.0000**	**9.4446**	**3841**

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 94.12%-ը (30,669.2 մլն դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 5.88%-ը (1,916.0 մլն դրամ)՝ ներդրողների հաշվին (որից ԳՊ-ն՝ 0.6%):

Աղյուսակ 3

2008թ. առաջին կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած ՊՊ-երի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	23.39	60.15	16.46	100.00
Ճետրվար	100.00	-	-	100.00
Մարտ	100.00	-	-	100.00
Ապրիլ	98.14	1.86	-	100.00
Մայիս	88.30	11.70	-	100.00
Հունիս	95.54	4.46	-	100.00
I կիսամյակ	**95.25**	**4.01**	**0.74**	**100.00**

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2008 թ. հունիսի 30-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում 2007թ-ի տարեվերջի համեմատ աճել է ռեզիդենտ այլ ներդրողների տեսակարար կշիռը՝ հասնելով 5.21%-ի (29.12.2007թ-ի դրությամբ՝ 4.26%), իսկ ոչ ռեզիդենտ ներդրողների կշիռը փոփոխություն չի կրել (նրանց կշիռը 0% է):

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2008թ. I կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 315 գործարք, որից
  - միջբանկային շուկայում՝ 291 գործարք
  - ՀՖԲ-ում՝ 24 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 33,771.3 մլն. դրամ, որից
  - միջբանկային շուկայում՝ 33,273.8 մլն. դրամ
  - ՀՖԲ-ում՝ 497.5 մլն. դրամ

Միջբանկային գործարքների ծավալում.

- ՊԿՊ շրջանառության ծավալը կազմել է 2,663.3 մլն. դրամ
- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 9,354.3 մլն. դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 21,256.2 մլն. դրամ

ՀՖԲ-ում կատարված գործարքների ծավալում.

- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 110.0 մլն. դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 387.5 մլն. դրամ

- Բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 8.83%,
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 3243 օր,
- Միջին օրական ծավալը՝ 276.8 մլն. դրամ,
- Գործարքների միջին օրական քանակը՝ 3:

Գծապատկեր 3

2008 թ. առաջին կիսամյակում կատարված գործարքների ծավալներն և եկամտաբերությունն ըստ ամիսների



Գծապատկեր 4

2008 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 days	92-182 days	183-364 days	1-3 years	3-4 years	4-5 years	5 years and more
գործ. ծավալ (մլն.դրամ)	127.1	490.3	2,445.9	3,013.1	2,295.5	3,455.8	21,949.6
եկամտ. (%)	6.49	6.43	6.79	7.39	7.48	7.77	9.64

Գծապատկեր 5

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը



Գծապատկեր 6

2008 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2008թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ԽԱՊ-երի բոլոր 11 թողարկումներին և ՊԿՊ-երի 5 թողարկումներից 2-ին,
- ներդրման ծավալը կազմել է 340.5 մլն դրամ, որից 197.0 մլն ՊԿՊ-եր և 143.5 մլն ԽԱՊ-եր,
- մարվել է 363.1 մլն դրամի պարտատոմս, որից 300.0 մլն ՊԿՊ-եր և 63.1 մլն ԽԱՊ-եր,
- թողարկված ՊԿՊ-երի 3.9% ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- 2008թ. հունիսի 30-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 667.9 մլն. դրամի պարտատոմս, որից 416.1 մլն ՊԿՊ-եր և 251.8 մլն ԽԱՊ-եր (տես գծ. 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2008թ. հունիսի 30-ի դրությամբ

(մլն դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 751, որոնցից 64-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 8),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2008թ. առաջին կիսամյակի ընթացքում



- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 157 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 114 օր, իսկ ԽԱՊ-երի համար՝ 228,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 12.2 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն կազմել է 197.0 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 5.3 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 11.4 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 98.5 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 4.9 մլն դրամ,

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2008թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
27-39 շաբաթ	95.7	4.3	100.0	-	-	-	-
40-52 շաբաթ	188.8	11.2	200.0	197.0	100	5	39.4
Ընդամենը	284.5	15.5	300.0	197.0	100	5	39.4

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2008թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարի	56.6	2.1	58.7	37.3	26.0	4	9.3
1 - 2 տարի	6.5	5.6	12.1	106.2	74.0	7	15.2
Ընդամենը	63.1	7.7	70.8	143.5	100	11	13.1

Գծապատկեր 9

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2008թ. հունիսի 30-ի դրությամբ



ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2008 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,550.3 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 1,383.0 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 89.2%),
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 167.3 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 10.8%):

2007 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 7.0 տոկոսով կամ 101.4 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է եղել ինչպես 2008թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործառնություններով, այնպես էլ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ*:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

2008թ. հունիսի 30-ի դրությամբ



2008 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

* 31.12.2007թ. դրությամբ 1 SDR=1.58025 USD, 1 EUR= 1.4721 USD
30.06.2008թ. դրությամբ 1 SDR=1.63362 USD, 1 EUR =1.5764 USD:

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2008թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	Սպասարկում		
		ընդամենը	այդ թվում	
			մարում	տոկոսավճար
Ընդամենը	**68.281**	**28.218**	**22.240**	**5.978**
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**59.617**	**13.403**	**7.870**	**5.532**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*52.061*	*10.860*	*6.422*	*4.438*
ա) Համաշխարհային Բանկ	47.736	10.073	6.014	4.059
որից՝				
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	47.736	9.496	5.597	3.898
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	0.000	0.577	0.417	0.160
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.442	0.625	0.407	0.218
գ) Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամ	3.228	0.162	0.000	0.162
դ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.000	0.000	0.000	0.000
ե) Ասիական Զարգացման Բանկ	0.655	0.000	0.000	0.000
2. Օտարերկրյա պետություններ	*7.556*	*2.543*	*1.449*	*1.094*
ա) ԱՄՆ	0.000	1.854	1.396	0.458
բ) Գերմանիա (KfW)	5.881	0.419	0.000	0.419
գ) Ֆրանսիա	0.000	0.072	0.053	0.019
դ) Ճապոնիա	1.675	0.198	0.000	0.198
II. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**8.664**	**14.816**	**14.370**	**0.446**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*5.428*	*14.773*	*14.370*	*0.403*
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	5.428	14.773	14.370	0.403
2. Օտարերկրյա պետություններ	*3.237*	*0.043*	*0.000*	*0.043*
ա) Գերմանիա (KfW)	3.237	0.043	0.000	0.043

2008թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 99.1%:

2008թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 82.6%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 17.4%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր 11):

Գծապատկեր 11

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2008թ. հունիսի 30-ի դրությամբ



2008թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ կառավարության անունից ստորագրվել է մեկ վարկային համաձայնագիր 7.9 մլն SDR գումարի չափով (վարկատու՝ Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ):